**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏԻ ՍՆՆԴԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր-1-ԱՋ»**
**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ք. Երևան** **«  » «  » 2026թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանգասարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կարեն Մկրտչյանի, ով գործում է և ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր-1-ԱՋ» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.16-րդ կետերը, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

***1. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</u>***

1.1 Պայմանագրի N 3-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

***2. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ</u>***

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

***3. <u>ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>***

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածը կազմված են 2 էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Պրոդ Ինվեստ» ՍՊԸ |
| Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 | Երևան, Զ. Անդրանիկի 44 շ բն 3 |
| ՀՎՀՀ՝ 01506515 | Արմսվիսբանկ ՓԲԸ |
| | Հ/Հ 2500011359880100 |
| | ՀՎՀՀ 01347339 |
| ------------------------------- | --------------------------------- |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ |

Digitally signed by
MANGASARYAN ARTAK
2707770051
Date: 2026.03.31 16:31:07 AMT

Ստորագրող
ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1707790329

2026-03-25 16:08:49 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

*Հավելված 1*
*2026թ.                  «        »  կնքված*
*N 1 համաձայնագրի*
*Հավելված N 3*
*25 փետրվարի 2026թ. կնքված*
*ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-Եր-1-ԱՁ ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

| Ապրանք | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգան (CPV) | անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 15898200/501 | սննդի փաթեթներ | | 1679100 | 3474000 | 4689900 | 5790000 | 7063800 | 8395500 | 9611400 | 10827300 | 12101100 | 13317700 | 14590800 | 14,590,800 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | 14,590,800 |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարություն
Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՎՀՀ՝ 01506515

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«Պրոդ Ինվեստ» ՍՊԸ
Երևան, Զ. Անդրանիկի 44 2 բն 3
Արմսվիթբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011359880100
ՀՎՀՀ 01347339

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.